



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

« 5 » օգոստոսի 2020 թվականի N: 259 Ձք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ
30-Ի N 62-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հաշվի առնելով «Մարալիկի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատարի 2020 թվականի հուլիսի 30-ի N 64 գրությունը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. «Մարալիկի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող հանձնաժողովի (ՈՒՀ-36) անհատական կազմում Վոսան Մելիքյանի փոխարեն ընդգրկել Անուշ Հովսեփյանին:

2. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2018 թվականի մարտի 30-ի «Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային ենթակայության առողջապահական

կազմակերպություններում հանձնաժողովներ ձևավորելու, հանձնաժողովների անհատական կազմերը, աշխատակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի ապրիլի 9-ի N 70-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 62-Ա որոշման 1-ին կետով հաստատված 8-րդ հավելվածի 1-ին կետում «Վոամ Մելիքյան - «Մարալիկի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատար, հանձնաժողովի նախագահ» բառերը փոխարինել «Անուշ Հովսեփյան - «Մարալիկի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատար, հանձնաժողովի նախագահ» բառերով:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

